

— Այո, երբ մեկը իմ վիճակիս մեջ չի գտնուի եւ ձի հեծնելու կարողութիւն ունենա:

— Բայց դու լաւ վարուեցար, խոսքով, եւ գործը իմ ուզածես լաւ կատարեցիր: Երթանք ուրեմն:

— Երթանք եղբայր,— ըսաւ խոսքով եւ թեթեւելով ելաւ տեղաց Յովնանի օգնութեամբ,— կը տեսնեմ, որ դեռ կարողութիւն կայ՝ դուրսի՝ ցուրտ օդը գիս կը կազդուրէ:

Չին պատրաստ էր եւ հեծաւ խոսքով, իսկ մեր երկու Վահրամները կէս քուն, կէս արթուն նետեցին դրաստներուն վրայ լաւ կապկպեցին ոչ միայն չը փախչելու համար, այլ մանաւանդ որպէսզի չընկնին: Սոցայ այս վիճակը տեսնելով խոսքով.

— Եղբայր, այդ մարդկանց չափ ես էլ խմեցի. տես թէ ի՞նչ վիճակի մեջ եմ հասել:

— Այս կը նշանակէ որ,— պատասխանեց Յովնան,— դու քանի մը տեսակ գինի միայն խմեցիր, սոքա ափիոն էլ խմեցին. եւ լաւ է իրենց համար եւ մեզ համար, ար Վահեւունուոյն պէս գլխացաւ չեն տար յիմար գանգատներով, եւ անուշ-անուշ կը քնեն այսօր էլ վաղն էլ:

— Միգուցե՛ յաւիտենական քունն էլ քնեն:

— Աստուած չընէ, պէտք է դատաստանով դատուին, դատապարտուին բարի օրինակի համար:

Հազիւ թէ ձիուն վրայ հեծաւ խոսքով եւ ասպանդակներուն վրայ կը կշռուէր, քանի մը տղաք, որ ճամփայներուն պահպանութեան համար դրած էր Յովնան, վազելով եկան, թէ ձիաւորաց խումբ մը կը հասներ Կերմանից կողմէն եւ ուղղակի վանք կ'ուզար:

— Կերմանից կողմէն վտանգ չի կայ, բայց դարձեալ դռները գոցեցէք եւ մեծ պարան մը իջուցէք պարիսպն ի վար սա դռան հակառակ